

891. 99-3
F-12

Handwritten text in cursive script, possibly a name or title.

6977

Handwritten text in cursive script, possibly a name or title.

Handwritten text in cursive script, possibly a name or title.

1897

2011

2003

ՅԱԿՈՐ ԲԱՐԱԽԱՆԵԱՆ

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՀԱՆԸ

Պատմական գրոյց

Երանի Կրան, որ մինչև իր շունչը վերջին
Հաւատարիմ կրմայ իր հայրենի հող ու ջրին:

А. Бабаханянцъ. Старшина Оганъ.

891.542-3

Բ-12

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Գրայ Հրատ. Ընկ. Ս. Կոնոբ. Գրու. Իզդ. Կ—րա.
Լորիս-Մել. տղ., ճ. № 13.

1897

20

891.542-3 ՅԱԿՈԲ ԲԱԲԵԽԱՆՅԱՆ

№ 244

Բ-12

ԱԿ

ՏԱՆՈՒՏԷՐ ՕՅԱՆԸ

Պատմական զրոյց

1008
358829

Երանի նրան, որ մինչև եր շունչը վերջին
Հաւատարիմ կըմնայ եր հայրենի հող ու ջրին:

А. Бабаханянцъ. Старшина Оганъ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типогр. Груз. Изд. Т—ва.
Лорисъ-Мел. ул., д. № 13.

1897

1937

22 40 25 02 25

1897

Дозволено цензурою. Тифлисъ, 26-го апрѣля 1897 года.

А. Бадакян

1897

Ն Ը Ի Ե Բ

Մեծապատի պարուն

ԳԵՈՐԳ ՄԻՐԶԱԷԿԵԱՆՅԻՆ

ՀԵԼԵՆԱԿԻՑ

ՏԱՆՈՒՏԵՐ ՕՀԱՆԸ

Ա

Այս անցքը պատահեց ուղիղ հարիւր տարի սրանից առաջ, երբ երջանկայիշատակ գեներալ Զուբովը իր յաղթանակող զօրքով մօտենում էր Շիրւանի գաւառին, երբ դեռ բռնակալի սուրը փայլում էր հազարաւոր խեղճ և անպաշտպան ժողովրդի գլխին: Այդ 1796 թւին էր:

Թուրք խաների և բէկերի սարսափելի կերպով կատարած արիւնահեղութիւնները լսելով Ռուսաց Կայսրուհի Եկատերինէ Բ.-ն՝ զօրք ուղարկեց Կովկասեան քրիստոնեաներին ազատելու համար:

Այդ ժամանակ քաղաքում նստած էր Մուստաֆայ խանը: Լսելով ռսների գալը նա սկսեց պատերազմի պատրաստութիւն տեսնել: Եւ ահա մի մի կողմից ռսների գալը, միւս կողմից հայերի գաղտնի յարաբերութիւնները նրանց հետ, աւելի ևս գրգռեցին մոլեռանդ մահմեդականներին, որոնք տարիներ շարունակ միշտ հալածում էին քրիստոնեայ ժողովրդին: Թէև նրանք առաջ գաղտնի աւազակի պէս գիշերներով էին յարձակւում հայ գիւղերի վրայ, սակայն այժմ սկսեցին օրը ցերեկով մտնել հայերի գիւղերը և կատարել իրանց գաղանդութիւնները: Այդ ժամանակ անպաշտպան ժողովուրդը չըկարողանալով տանել թշնամու ծանր

և անտանելի հալածանքները, մեծամասնութիւնը սկսեց գաղթել իր հայրենիքից:

Թշառ գիւղացին երկար տարիներ արիւնքրտինքով վաստակած աշխատանքի մեծ մասը իր սեպհական սալով բաժին էր տանում խաներին ու բէկերին: Իսկ այժմ գրկուում էր իր սեպհական մասիցն ևս:

Զրկում էր տարիների ընթացքում հազիւ կառուացած աղքատիկ խրճիթիցը: Վերջապէս ամեն ինչ թշնամուկ էր լանձնում. միայն իր կեանքն էր ազատում կատաղի թշնամուկ ճանկերից: Եւ ուր էին գաղթում նրանք, դէպի ո՞ր կողմը, արդեօք կամ մի գիւղ կամ մի քաղաք, ուր այդ ժամանակ չըթագաւորէր բռնակալի սուրը, — ո՛չ: Որ կողմն էլ գնային, տարակոյս չըկար, որ տակաւին պիտի հանգիպէին կատաղի թշնամուկ. ուստի յոյսերը կտրած, նրանք քաշւեցին տերեւախիտ անտառները և մնացին սովատանջ: Թշառ ժողովուրդը ըսպէ առ ըսպէ սըրտատրոփ սպասում էր, որ շուտով օգնութեան կը հասնէ գեներալ Զուբովը և իրանք կըմտնեն ռուսաց ազատ դրօշակի տակ: Օրը օրի վրայ էր անցնում, սակայն գեներալ Զուբովը դեռ հեռու էր Շիրւանի գաւառից: Նա դեռ յաղթական դրօշակով նոր էր անցել Դերբենդից, և գալիս էր Աուբայ քաղաքի վրայ: Ամեն օր լսում էր թէ ինչպիսի քաջութեամբ առաջ էր գալիս ռուսաց զօրքը: Նրանք արդէն առանց պատերազմի գրաւել էին Դերբենդը և տեղական Շըխ-Ալի խանին գերի էին առել հետները: Այդ լուրերը լսելով

մահմեդականներն աւելի ևս զրգուեցին հայերի դէմ: Եւ այդ օրից քար-քարի վրայ չըթողին այն սահմանում, որտեղ ապրում էր հայ կամ քրիստոնեայ մի ազգ: Բայց այդ սարսափելի ըսպէներում միմիայն մի գիւղ կար, որ իր տեղից չըշարժւեց, որովհետեւ այդ գիւղի մէջ գտնւեց մի մարդ, որն իր անվեհերութեամբ և քաջութեամբ կարելոյն չափ պաշտպան եղաւ ժողովրդի մի ստար խմբին և չըթողեց, որ գաղթեն իրանց հայրենիքից: Դա Կ. գիւղի տանուտէրն էր, որի անունն էր Օհան: Նա բնիկ Կ. գիւղացի էր:

Նրա բարձր և վիթխարի հասակը տեսնողը կարող էր ասել, որ դրա ծնողը մարդկային արարած չի եղել, այլ մի ահռելի վիշապ. նրա երկար բազուկները և յաղթանդամ լայն թիկունքը ցոյց էին տալիս նրա անասելի քաջութիւնը: Ինչպէս նա իրանց գիւղի տանուտէրն էր, նոյնպէս և քաջ զինւորն էր: Նա միշտ գիշերներն իր սպիտակ նըժոյգի վրայ նստած, գէնք ու զրահի մէջ փաթաթւած, շրջում էր իրանց գիւղի չորս կողմը, որպէս մի արթուն զինւոր, որ շրջում է պահականոցի շուրջը:

Շատ գիշերներ նա իր տանը չէր գտնուում, Աստուած գիտէր, թէ նա ինչ էր կատարում այդ ժամերին: Իսկ առաւօտեաները դեռ արեւը չըծագած նա կանգնած էր լինում գիւղամիջում:

Այն օրւանից, որ նա տանուտէր էր նշանակւել իրանց գիւղի վրայ, ոչ մի փորձանք չէր եկել այդ գիւղի գլխին: Ոչ մի թուրք, ոչ մի աւագակ չէր մօտեցել նրանց: Բէէ և մի քանի թուրք բաշիբոզուկներ և

յայտնի աւագակապետ Մէլթի-բէկը մօտեցել էին այդ գիւղին, սակայն ամենքն էլ ստացել էին իրանց արժանի պատիժը տանուտէր Օհանից ու սարսափահար յետ էին փախել: Նա այն աստիճան ահ էր գցել իւրաքանչիւր թուրք աւագակի սրտի մէջ, որ եթէ լսէին թէ տանուտէր Օհանը այս ինչ ճանապարհով պիտի անցնի, իսկոյն մի կտոր քար կը դառնային և էլ չէին երեւալ այն սահմաններում:

Գաղթականութիւնը սկսեց յուլիսի սկզբից:

Շիրւանի ամբողջ շրջակայքում մի հայ գիւղ չէր մնացել, որ ենթարկւած չլինէր թշնամու յարձակման: Թալանել, քանդել, աւերել, տակն ու վրայ անել ամեն ինչ, — ահա նրանց գործը: Բայց դեռ թշնամին չէր մօտեցել Կ. գիւղին, որովհետեւ բաշիբոզուկների գլխաւոր՝ արիւնարբու առիւծը՝ Մէլթի-բէկը, որից սարսափում էր ամբողջ Շիրւանի գաւառը, վախենում էր Կ. գիւղացի տանուտէր Օհանի անունը լսելիս: Բայց ահա նա երբ իր խմբով տակն ու վրայ արեց մի քանի օրւայ մէջ խան գիւղը, այն ժամանակ ինքն իր մէջ համոզեց, որ այլևս Կ. գիւղացոց վրայ յարձակելը դժար չէ կարող լինել իրանց համար, որովհետեւ խան գիւղը այնքան հեռու չէր Կ. գիւղից: Այդ երկու գիւղերն երբեմն պաշտպանւում էին միմեանցով, բայց այժմ երբ նրանցից մէկը, համարեա կործանւած է՝ Մէլթի-բէկը կարծում էր, որ Կ. գիւղացիք այլ ևս ոյժ չեն ունենալ իրանց դիմադրելու:

Այն ինչ՝ Կ. գիւղի բնակիչները վաղուց էին գուշակել թշնամու մոտադրութիւնը և դրա համար նրանք իրանց պատրաստութիւնը վաղօրօք տեսել էին: Եւ ահա երբ նրանք պարզապէս իմացան թէ աւագակապետ Մէլթի-բէկը մտադիր է իր խմբով մի գիշեր գաղտնի ձեռով յարձակւել իրանց գիւղի վրայ, տանուտէր Օհանը սկսեց իր պատրաստութիւնը տեսնել:

— Զեզ ամենքիդ արդէն յայտնի է, յարգելի ժողովուրդ, ասում էր նա, թէ այս րոպէիս ինչ վտանգ է սպառնում մեր գիւղին: Մեր կեսնքը այժմ վրտանգի մէջ է և պէտք է շտապել դրա առաջն առնել: Գիտէք դուք, որ Շիրւանի հայաբնակ գիւղերը բոլորովին դատարկեցին, վախկոտ և ծուլ ժողովուրդը տարիների ընթացքում իր ճակատի քրտինքով ձեռք բերած աշխատանքը թշնամուն թողնելով, գաղթեց՝ մի մասը հեռուոր լեռները, իսկ միւս մասը դէպի ռուսաց զօրքը: Այդ անօրէն Մէլթի-բէկը իր բաշիբոզուկներով քանդեց, տակն ու վրայ արաւ տասնեակ շէն հայի գիւղեր: Նա դեռ այդքանով չըբաւականանալով, պատրաստւում է յարձակւելու մի օր էլ մեր գիւղի վրայ: Բայց, ի հարկէ, չըմտածելով թէ տանուտէր Օհանը ինչպիսի կարմիր գնդակ է պատրաստել նրա համար: Գիտէք, եթէ մենք ուղենանք թոյլ չենք տալ, որ այդ անօրէն թշնամիները ոտք կոխեն մեր սահմանը: Մենք չըպէտք է շտտերի պէս թողնենք մեր գիւղը, մեր ընտանիքը, մեր ունեցած կայքը և վախկոտների պէս հեռանանք

լեռները, այլ մինչև գեներալ Զուբովի գալը մենք ևս պիտի ցույց տանք մեր քաջութիւնը, որպէս զի վաղևան օրը գեներալն էլ տեսնի, թէ մենք վաղուց ենք զգուշ բռնակալ խաներից և բէկերից: Վաղուց է որ սպասում ենք ամենաողորմած թագուհու օգնութեանը ու կամենում ենք թօթափել մեր վզից խաների ծանր լուծը և մըտնել նրա հովանաւորութեան տակ: Հաւատացնում եմ, որ եթէ մենք տեղներիցս շարժւենք և քաջութեամբ դիմադրենք թշնամուն, ամենքս պարզ երեսով կարող ենք դուրս գալ գիներալի առաջ և բացի դրանից մեծ անուն կարող ենք վաստակել. տեսնում էք մեր Մարկոսեց Եղա-բէկին որքան նշաններ ունի իր կրծքի վրայ: Նա նոյնպէս իր քաջութեամբն է ստացել ռուսաց զնդի մէջ եղած ժամանակ: Այժմ եթէ մեր գիւղացիքն էլ քաջութեամբ դիմադրեն թշնամուն, տարակոյս չըկայ որ մեր իւրաքանչիւրի քաջութիւնը տեսնելով գեներալը՝ մեր կրծքերը նշաններով չըզարդարի: Եւ եթէ այդպէս լինէին Շիրւանի ամբողջ հայաբնակ գիւղերը, այսօր այդ աստիճան խեղճ գառնուկ չէինք երևալ թշնամու աչքին: Տեսնում էք, ռսները խղճալով մեզ՝ օգնութեան են հասնում, իսկ մեր գիւղացիները իրանց սիրած հայրենիքը, պաշտած հօդն ու ջուրը բաշիբոզուկ աւազակներին թողած՝ գաղթում են հեռաւոր լեռները և մնում են այնտեղ սովատանջ դրութեան մէջ. ի հարկէ վերջն էլ մեռնում փրջանում են: Կարծես թշնամին գալլ լինի, իսկ մենք

գառը: Մինչդեռ երկուսս էլ մի Աստծու ըստեղծած մարդիկն ենք, բայց ինչո՞ւ նրանք քաջ են, իսկ մենք ծուլ և վախկոտ: Ինչո՞ւ մեզ համար կեանքը քաղցր է, իսկ նրանց համար դառը, կամ նրանք քարից են ծնւած իսկ մենք մարդից: Ձէ որ նրանցից իւրաքանչիւրն էլ մեզ պէս ունի ծնողներ, որոնք հեռու երկրներում սպասում են իրանց որդու քաջ ու կտրիճ անունը լսելուն: Ձէ, սիրելիք, եթէ այսօր քաղցր է նրանց համար կուէի դաշտում մեռնելը, նոյնը պիտի լինի և մեզ համար: Աւելի լաւ է քաջութեամբ սուրը ձեռքին ընկնել կուէի դաշտում, քան թէ վախկոտ կատուի պէս ամալի դաշտերում մահամերձ լինել:

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենում գիւղի լայնատարած փողոցում, որտեղ երեկոները իւրաքանչիւր տնից մէկ-մէկ գալով՝ կազմում էր ահագին բազմութիւն: Նրանք միշտ ժողովելով այնտեղ, խօսում էին օրւայ գէպքերի մասին, իսկ այժմ նրանց խօսակցութեան նիւթը միմիայն այն էր, թէ երբ պէտք է ռուսաց զօրքը օգնութեան հասնի իրանց, երբ պէտք է ապահով լինի իրանց կեանքը և այդ մասին խօսողը միշտ տանուտէր Օհանն էր, որի ասածները ուշադրութեամբ էին լսում իր համագիւղացիները:

Նրա խօսքերը այն աստիճան ազդում էին գիւղացիների վրայ, որ համարեա ամբողջ գիւղը պատրաստ էր քաջութեամբ կանգնել թշնամու առաջ: Եւ մինչև անգամ ո՛չ թէ զէնքերով, այլ և իրանց մահակներով: Բաւական էր, որ նրանք հասկացան

Թէ կռիւն իրանց կեանքի, իրանց սիրած ու պաշտած մայրենի հող ու ջրի համար էր: Նրանք բոլորն էլ երգւեցին, որ մինչև իրանց վերջին շունչը կը դիմադրեն թշնամուն, մինչև որ կը մօտենայ ռուսաց զօրքը և իրանք կը մտնեն նրանց ազատ դրօշակի տակ, մինչև որ իրանց կեանքն ապահով կը լինի: Այսպէս ահա այս բոլորը գլուխ քերելուց յետոյ՝ տանուտէր Օհանին մնում էր իմանալ թշնամու մտադրութիւնը, թէ նա երբ է որոշել իրանց վրայ գալու, և այդ դժուար չէր տանուտէր Օհանի պէս անվախ հսկայի համար: Նա մի օր ծպտեալ ձևով ճանապարհ ընկաւ դէպի թշնամու բանակը:

Բ

Խան գիւղը քանդել աւերելուց յետոյ աւազակապետ Մէլթի-բէկը բացի իր բաշիբոզուկ խմբից, ժողովեց իր գլխին Շիրւանի լեռնական չերքեզների մի ստւար խումբ և պատրաստեց յարձակում գործել այժմ էլ Կ. գիւղի վրայ...

Բայց օր օրի վրայ աւելի ճշգրտւում էր ռսների գալու մասին տարածւած լուրը: Ուստի, թէև մի կողմից Մէլթի-բէկը վախենում էր, որ մատնուէր ռսների ձեռքը, սակայն, միև կողմիցն էլ, ինքն իրան յոյս էր տալիս, որ մինչև ռսների գալը նա իր անելիքը վերջացրած կը լինի և կը փախչի Պարսկաստանի խորքերը: Եւ ահա այդ մտադրութեամբ նա կամենում էր որքան կարելի է շուտ գլուխ քերել իր անելիքը: Մի օր, երբ նա

իր խումբով գտնոււմ էր Հաւթարանի անտառում, ասաց իր հետևորդներին.

— Գիտէ՞ք թէ՛ ինչ պէտք է անէք, իսլամի որդիք: Մեր առաջին գործը պէտք է լինի՝ մի գիշերւալ մէջ տակնուվրայ անել ամբողջ Կ. գիւղը ու կենդանի բռնել այդ գեաւուր Օհանին: Մէլթի-մենք պէտք է հպատակենք քրիստոնեաներին, որ միշտ մեր ձեռքի տակն են մեծացել, միշտ մեր դազանակի տակ իրանց գլուխը խոնարհել:

— Տղերք, — գոչեց բարձր ձայնով Մէլթի-բէկը. — ամօթ և նախաինք այն սիւննուն, որ այդ գեաւուր հայերին գառան պէս չըմօրթէ: Պէտք է աւերել ամբողջ Կ. գիւղը, կոտորել անխնայ, կողոպտել ամեն ինչ, թողնել միմիայն աւերակների կոյտեր, որ յետոյ ռսները գան և տիրեն այդ աւերակներին:

— Այդպէս էլ պէտք է անենք, — պատասխանեց ամբողջ խումբը, — էլ ինչո՞ւ ենք սպասում. ինչ որ անելու էք շուտով կատարեցէք, չէ՞ որ կարող ենք յանկարծ մատնել ռսների ձեռքը:

— Ամենաբարձրեալ Ալլահը և մեծ Մահմէդը իր հզօր կարողութեամբ ոյժ և քաջութիւն կը տաք մեզ, — շարունակեց Մէլթի-բէկը:

— Իմ կարծիքով հէնց այսօր պէտք է կատարենք մեր անելիքը, ասաց խմբի անդամներից մէկը:

— Այո՛, հէնց այսօր, — խօսեց նորից Մէլթի-բէկը, այսօր, քանի որ այդ անօրէնները կամենում են որ մեր իրաւունքները անցնի ռուսաց ձեռքը: Ա՛խ, եթէ այդ գեաւուր Օհանը կենդանի ձեռքս

կընկնի, դուք կըտեսնէք թէ, ինչպիսի պարզեանք տալով կողորկեմ նրան գեներալ Զուբովի մօտ...

Մինչդեռ Մէյթի-բէկը ոգևորւած իր խմբի հետ էր, երբ լանկարծ հեռւից մի սև ձիաւոր երևաց, որ գալիս էր գէպի իրանց կողմը, արծւի արագութեամբ:

— Այդ ո՞վ պէտք է լինի, ասաց Մէյթի-բէկը, շիտեղով ձիաւորին:

— Սիւննու է նմանում, պատասխանեցին մի քանիսր:

— Ոչ, դա կարծես հայ լինի, այն էլ մեզ ծանօթ, ասաց մի ուրիշը:

— Ի՞նչ ես գտարի զուրս տալիս, պատասխանեց Մէյթի-բէկը. հային այդքան սիրտ ո՞վ է տուել, որ տեսնելով սիւննիների մի ահագին խումբ, ուղղակի մօտենայ. — դա անպատճառ մերոնցից է:

— Տեսնենք ով է և որտեղից է գալիս, կարծես ծերունի լինի, ասաց Մէյթի-բէկը: Չանցաւ մի քանի րոպէ այդ խօսակցութիւնից, երբ միակ ձիաւորը կանգնեց նրանց առաջ, տալով իր բարեւ ամենքին:

Դա սև զգեստով և վիթխարի հասակ ունեցող մի մարդ էր, թէև նա ազգով սիւննի չէր, սակայն ոչ ոք չէր կարող արտաքին ձևերից նկատել նրա ինչ ազգ լինելը: Բայց այնու ամենայնիւ նա հագնւած էր կատարեալ սիւննու հագուստով, փաթաթուած գէնք ու զրահի մէջ: Եւ ահա այդ պատճառաւ Մէյթի-բէկը նրա հետ սկսեց լրջօրէն խօսել:

— Բարի լինի՝ այժմ որդ, որտեղից ես գալիս այդպէս շտապով, հարցրեց առաջին անգամ Մէյթի-բէկը:

— Քաղաքից, բէկ. — պատասխանեց ձիաւորը:

Ահա քանի օր է որ լսել ենք ռսների գալը. ուստի այդ պատճառաւ էլ այսօր գնացի քաղաք տեղեկութիւն իմանալու:

— Դուք որ գիւղիցն էք, հարցրեց Մէյթի-բէկը:

— Ես Ղաշար գիւղի տանուտէր Սալիմ-բէկն եմ, եթէ լսած էք, պատասխանեց ձիաւորը:

— Լսած եմ, բայց առաջին անգամն եմ ձեզ տեսնում, ասաց Մէյթի-բէկը, և շարունակեց. — Այո՛, Սալիմ-բէկ, շուտով ռսները կըգան և մեր ամեն իրաւունքները կըխլեն. մեզանից գուցէ այսօր, կամ վաղը: Բայց ձեր գիւղը ինչ մտադրութեան մէջ է այդ մասին:

— Մեր գիւղը, պատասխանեց Սալիմ-բէկը, վաղուց է մտածել իր անելիքի մասին:

— Ի՞նչպէս:

— Ահա թէ ինչպէս: Եթէ ճիշտ ռսները յաղթեցին Մուստաֆայ խանին և տէր դարձան մեր հողերին, այն ժամանակ մենք վճռել ենք վերցնել մեր շարժական հարստութիւնը և ուղղակի անցնել գէպի Պարսկաստան: Փոխանակ ռսներին հպատակելու, կըհպատակենք մեր Շահին: Բացի այդ մենք վճռել ենք մեր վրէժը առնել այստեղացի հայերից, — չէ՞ որ նրանք եղան մեր իշխանութեան անկման պատճառը: Թէ չէ՞ ո՞վ կարող էր խլել մեր խանական իշխանութիւնը:

— Ի հարկէ, կտրեց նրա խօսքը Մէյթի-բէկը, մինչև հիմա քրիստոնեաները մեր ճանկերումն են մեծացել, իսկ հիմա մի թէ ամօթ չէ մեզ, որ մենք հպատակենք նրանց. աւելի լաւ է գնալ մեր

Շահին ծառայել, քան թէ ռաներին. հոգ չէ, որ այստեղից տեղափոխելով՝ թողնում ենք մեր անշարժ կայքն ու հարստութիւնը: Մենք այդ ամենի փոխարէն արդէն մտածել ենք մեր անելիքը:

— Այսինքն քնչպէս, — հարցրեց Սալիմ-բէկը:

— Այն, որ մենք այդ ամենի փոխարէն սկսել ենք թալանել գեաւուրներին, որոնք մեծամեծ պատրաստութիւններ են տեսնում ռաների դրօշակի տակ մտնելու համար: — Եթէ մեր խանական իրաւունքները վերջացան, իմացած եղէք, որ պատճառը այդ Կ. գիւղի հայերն էին, որ այժմ էլ այդպէս գլուխ են բարձրացրել մեզ վրայ: Սպասիր, երբ աւերակ կը դարձնենք բոլոր հայաբնակ գիւղերը, այն ժամանակ կը հասկանան թէ ով է Մէլթի-բէկը, կը հասկանայ և գեաւուր Օհանը, թէ ով եմ ես. նրանք կ'արձում են, թէ ես էլ Մուստաֆայ խանի պէս նեղ տեղ ընկած ժամանակը անձնատուր կը լինեմ ռաներին, բայց ոչ, երբէք, եթէ մինչև անգամ մենակ էլ մնամ կուրի դաշտում, դարձեալ իգիթի պէս, ամենամեծ Ալլահի զօրութեամբ կը կուգեմ թշնամու հետ, նոյն իսկ մինչև վերջին շունչս:

Վերջին խօսքերը Մէլթի-բէկը արտասանեց այնպէս ոգևորւած, որ իր ամբողջ բանակը զարմացաւ: Եւ նա մերկացնելով իր երկայն դաշոյնը, նորից դարձաւ իր հետևորդներին:

— Տղերք, այսօր մեր վերջնական կռիւն է, որտեղ պէտք է ցոյց տանք մեր անասելի բաջուրութիւնը. այսօր պէտք է Կ. գիւղի գլխին այն խաղը խաղանք, ինչ որ Խան գիւղի գլխին խաղացինք:

Իսկ դու Սալիմ-բէկ, գնա՛, լուր տուր բոլոր զաջարեցիներին, որ քսանուհինգ տարւան աւագակ Մէլթի-բէկը այսօր հայրենիքի ազատութեան համար իր քաջ խմբով պատրաստ է կուելու գենեւրալ Զուբովի անթիւ ու անհամար զօրքերի դէմ:

— Բայց չէ՞ որ Մուստաֆայ խանը պատերազմի պատրաստութիւն էր տեսնում, — պատասխանեց Սալիմ-բէկը:

— Ճշմարիտ է, որ նա վաղօրօք էր տեսնում իր պատրաստութիւնը. բայց ինչ արած, երբ նա խաբւեց մի հայ հոգևորականի*) խօսքով և այժմ էլ, ասում են, որ մտադիր է քաղաքը առանց մի որ և է պատճառի յանձնել ռաներին, թէև նա վաղուց մտադրւեց դիմել Շուշույ իբրահիմ խանին, որ իրան օգնութեան հասնէ, բայց մինչև այսօր այդ խորհուրդները մի որ և է յետևանք չունեցան: Վերջապէս թող ինչ ուզում է այնպէս էլ անէ խանը, դա մեր գործը չէ, մենք մեր անելիքը լաւ գիտենք, մենք մինչև այսօր՝ քաղաքում նստած խաների ասածներին բոլորովին չենք հետևել, որ այսուհետև հետևենք:

— Եւ լաւ էք արել, որ չէք հետևել. հէնց այդ Մուստաֆայ խանը չէր, որ այդքան ազատ թողեց հայերին, որ վերջը նրանք պատճառ դարձան մեր կողմերը ուսաց ձեռքն անցնելու:

— Բայց այժմ դուք ո՞ր կողմի վրայ էք մտադիր անցնելու, հարցրեց Սալիմ-բէկը, և միևնույն

*) Այդ հոգևորականը երջանկայշտակ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանցն էր, որ այդ ժամանակ շրջում էր ուսաց զօրքի հետ Աովկասում:

ժամանակ ձիու սանձը քաշեց, որովհետև պատ-
րաստուում էր հեռանալ նրանցից:

— Դէպի Կ. գիւղի վրայ, պատասխանեց Մէյ-
թի-բէկը:

— Ուրեմն այդպէս, ասաց Սալիմ-բէկը, իրիկ-
նագէմին մենք մեր խմբով ձեզ կըսպասենք Գիւր-
ջիւանից հեռու Ձահրէ-ձորի մէջ:

— Սնալայման մենք ևս այնտեղ կըլինենք,
պատասխանեց Մէյթի-բէկը:

— Մնաք բարեալ առ այժմ, — ասաց Սալիմ-
բէկը և մտրակելով իր ձին՝ հեռացաւ նրանցից:

Նրա գնալուց յետոյ Մէյթի-բէկը հրամայեց իր
հետևորդներին, որ պատրաստեն իր ձիերն ու
զէնքերը, մի քանի ժամից յետոյ գէպի իրանց
արշաւատեղը ճանապարհ ընկնելու համար:

Գ

Գիշեր էր:

Երկինքը պատած էր մի այնպիսի մառախու-
ղով, որ ոչինչ նշմարել չէր կարելի: Սմեն տեղ
տիրում էր խորին լուռութիւն: Հեռու ձորերից
լսուում էր գետերի ահուելի վըշվշոցը: Միշտ այդ
ձորերից անպակաս էր լինում քարւանք, որ օրա-
կան հազարի չափ ներս էր մտնում Շիրւանի գա-
ւառը և նոյնչափ դուրս գնում: Բայց այդ գիշեր
քարւանքներն էլ չըկարողացան շարունակել իրանց
սովորական ճանապարհը, որովհետև այն աստի-
ճան սևացել էր երկինքը, որ նրանք էլ էին կորց-
նում իրանց ճանապարհը:

Միայն մի ձիաւոր էր, որ, ճեղքելով թանձր
մառախուղը, առաջ էր գնում: Դա բարձրահասակ,
սև զգեստի մէջ փաթաթւած մի մարդ էր: Նա
այնպէս արագ էր մտրակում իր ձին, որ կար-
ճես մի կարևոր գործի էր շտապում. որքան էլ
բնութիւնը անախորժ և տխուր լինէր, այնու ա-
մենայնիւ նրա համար նշանակութիւն չունէր ոչ
գետերի ահուելի վըշվշոցը, ոչ կարհուրելի մթնա-
գիշերը. երբէք մի վայրկեան անգամ նրանք ահ չէին
բերում նրա անվախ սրտին, այլ մտրակելով իր
ձին, թևաւոր թռչունի նման սլանում էր րառաջ:

Դա Կ. գիւղի տանուտէր Օհանն էր, որ վե-
րադառնում էր թշնամու բանակից՝ ամեն ինչ ի-
մացած: Նա հազնւած էր այն ձևով, որ տեսնողը
կընմանացնէր մի թուրք աւագակի. իր երկա-
րաձև հագուստի վրայից ծածկել էր եսփնջին,
իսկ մէջքին կապել էր լայն կաշի գօտիկը, որի
չորս կողմը զարդարւած էր հրացանի գնդակներով.
առաջից կախւած էր երկայն դաշոյնը, իսկ մէջքին՝
հրացանը:

Թշնամու բանակից մինչև Կ. գիւղը ընդա-
մենը 70 վերստ էր, բայց այդ 3—4 ժամայն ճա-
նապարհը այնքան ահաւոր էր, որ ոչ մի քրիս-
տոնեայ միայնակ չէր համաձայնել օրը ցերեկով
անցնել այդտեղից: Թէ որքան անմեղ մարդիկ էին
զոհ գնացել այդ կարճ ճանապարհը անց ու դարձ
անելուց, այդ միայն Աստուած գիտէ: Ո՛րքան ան-
մեղ մարդկանց հէնց այդ ճանապարհի մէջ թա-
ւանել էր ու սրի բաժին արել արիւնարբու Մէյ-

Թի-բէկը. որքան անմեղ հայ կանայք այդ ճանապարհի մէջ զոհ են գնացել նրանց գազանային կրքերին. այդ ամենը շատ լաւ գիտէր տանուտէր Օհանը, որն այս ըոպէիս ինքն էր անցնում այդ ճանապարհով:

Կէս գիշեր էր:

Արդէն երկինքը կամաց-կամաց պարզուում էր, բայց դեռ բաւական ճանապարհ կար մինչև գիւղ հասնելը. նա դեռ Աղսուի գետից չէր անցել, այլ անցնում էր խստատերև տնտառների մօտից. բայց ահա նրա աչքին հեռւից ինչ է երևում, — անտառի խորքից կրակի մի նշույլ:

— Արդեօք այս ինչ կրակ է, հովիւներն է, թէ քարաւանների. բայց աւանդ, դա ոչ հովիւների էր և ոչ էլ քարաւանների, այլ մի ուրիշ մարդկանց: Մի քանի ըոպէից յետոյ, երբ մօտեցաւ կրակին, ինչ տեսաւ: Անտառի մէջ տեղում բոլորած էին հինգ հոգուց բաղկացած սիւննի թուրքեր, իսկ մէջ տեղերում բոցավառում էր կրակը: Կրակի շուրջը շարւել էին սիւննիք, ինչպէս երևում էր՝ նրանք քաղցր խօսակցութեան մէջ էին, իրիկւայ կատարած գազանութիւնների առիթով: Նրանցից իւրաքանչիւրը պարծանքով պատմում էր իր արածը, թէ ինչպէս օրը ցերեկով մտաւ Խան գիւղը և մի քանի ըոպէի մէջ տակն ու վրայ արին ամեն ինչ, թալանեցին մարդկանց և սրի բաժին արին, իսկ գեղեցիկ աղջկերանց և մատաղ մանուկներին՝ ձեռները կապտած՝ գերի տարան: Այդ ամենը նրանք կատարեցին երեք

օրւայ ընթացքում, որովհետև այդպէս էր պատւիրել Մէլթի-բէկը: Նրանք պատմում էին իրանց կատարած գազանային բարբարոսութիւնները: Նրանցից մէկը խուրջինից դուրս էր տալիս հինգ հոգու թալանած աւարը և դարսում էր ընկերների առաջ: — Դարսիւր բոլորը և համարիւր, ասաց նրանցից մէկը, տեսնենք ով ինչքան տղամարդութեամբ է շարժւել և ինչքան բան է բերել: Դա նրանց տասնապետն էր: Բարձրահասակ սիւննին միամտաբար մէկը միւսի յետեից դուրս էր տալիս խուրջինից զանազան թանգազին ոսկեղէններ, քարեղէններ և ուրիշ զանազան տնային զարդեր. նրանց մէջ կային նոյնպէս և եկեղեցական անօթներ, շատ խաչեր և ուրիշ առարկաներ: Տանուտէր Օհանը տեսնում էր այդ ամենը, որը մի քանի քալ հեռու կանգնած էր: Մի քանի ըոպէ գիտելուց յետոյ՝ նա ընկաւ մտածմունքի մէջ, բայց ըոպէական մտածողութիւնից յետոյ նրա մտքում ծագեց մի միտք և իսկոյն յետ դարձրեց իր ձին դէպի անտառի խորքը, որտեղ ծառերը շրջապատւած իրար մէջ կազմում էին մի լաւ և ապահով թաքստի տեղ:

Այդտեղ նա ձիուց իջաւ և նրան կապեց մի հաստաբուն ծառից, իսկ ինքը առնելով հրացանը, բարձրացաւ մի այնպիսի ծառի վրայ, որտեղից կարելի էր ամեն ինչ տեսնել ու լսել: Երբ նա մտադարձ իր տեղում, նորից սկսեց լաւ դիտել դէպի կրակը: Նա այժմ պարզ տեսնում էր ամեն ինչ, տեսնում էր կրակի շուրջը բոլորած աւազակներին, թէ ինչպէս նրանք մի օրւայ մէջ

Թալանած աւարը կիսում էին իրանց մէջ. կարծես անօրէնները իրանք էին արիւն-քրտինք թափել և աշխատել այդ բոլորը:

Բոպէական լուսթիւնից յետոյ՝ տանուտէր Օհանն այլ ևս չըկարողացաւ համբերել. — անօրէններ, դուրս թռաւ նրա յուզած սրտից, և միւսնոյն ժամանակ արձակեց իր հրացանը:

Մի ակնթարթում մահաբեր գնդակը նետուելով ուղղակի միւսեց հինգ հոգիներից մէկի սրտին, որը իսկոյն երեսի վրայ փուլեց կրակի մէջ: Մնացեալ չորս հոգիները իսկոյն իրանց տեղներից վեր թռան և իւրաքանչիւրն առաւ իր հրացանը, որը միամտաբար դրած էր իրանց կողքին: Նրանցից մէկը գէս գնաց, միւսը գէն, բայց չըգտան յանկարծակի գնդակ նետողին: Ո՞վ կարող էր արդեօք գիշերւայ այդ ժամին գտնուել Շիրւանի անտառում և յարձակուել հինգ սիւննիների վրայ. ո՞վ կարող էր երևակայել այդ: Սարսափը տիրեց նրանց և նրանք մնացին շւարած ու կրկին մօտեցան գէպի կրակը: Այդ վայրկեանին յանկարծ երկրորդ անգամ տանուտէր Օհանը արձակեց հրացանը, որ նոյնպէս միւսեց նրանցից մէկի ճակատին: Այս անգամ մընացեալ երեք հոգիները կատաղեցան և առանց իմանալու յանկարծակի գնդակ նետողի տեղը, իրանց հրացանները արձակեցին ուղղակի: Սակայն ի զուր՝ արձակած գնդակները միմիայն սլացան անտառի միջով և մօտան սառը հողի ծոցը: Գրուսթիւնը զարհուրելի էր: Նրանք ոչ կարողանում էին թշնամուն գտնել, ոչ էլ կամենում էին ընկերներին թող-

նել: Նրանք ճարահատեալ իրանց յոյսները կտրած՝ սկսեցին բարձրաձայն խօսել անյայտ թշնամու հետ:

— Տմարգուսթիւն է թագնւած տեղից յարձակուելը և միւսնոյն ժամանակ պատիւ չէ բերում իգիթութեանը: Եթէ տղամարդ էք, մէյդան դուրս եկէք:

Ոչ մի պատասխան չըստացան նրանք, այլ միայն պատասխանի փոխարէն մի գնդակ ստացան, որ նոյնպէս միւսեց նրանցից մէկի մէջքին: «Տմարգուսթիւն», հառաչեց նա ու մտաւ Մահմէդի գիրկը: Վերջին երկու հոգիները շւարած՝ կամեցան փախչել, բայց ինչպէս, — թողնել իրանց ընկերների դիակը և այդքան աւարն ու հեռանալ. այդ դժուար էր նրանց համար: Բայց ինչ անէին, որ այդ վտանգից իրանց փրկել կարողանային: Նրանք այն աստիճան շփոթուել էին և զարմացել, որ ստիպւած էին կարծելու թէ երկնքիցն են այդ գնդակները տեղում, և այդ այն պատճառով էր, որ նրանք այն աստիճան գազանային ձևով էին վարուել խան գիւղի քրիստոնեայ բնակիչների հետ, և կարծում էին թէ Աստուած է պատժում իրանց, Աստուած է տեղում երկրնքից այդ գնդակները: Բայց աւանդ, Աստուած այդպէս շուտ չէ անում մեղաւորների դատաստանը...

Երկու սիւննիները այդ մտածմունքից յետոյ մօտեցան իրանց աւարը ժողովելու, որպէս զի շուտով հեռանան այդտեղից: Բայց դժբախտաբար այդ բանը նոր առիթ տւեց թշնամուն և նա նորից իր գնդակը հասցրեց նրանցից մէկին հէնց այն ժամանակ, երբ նա մի ոտքը նոր էր դրել ձիու ասպանդակին: Բայց այժմ, դեռ ձիու վրայ չընստած՝ ձին խրտնեց

և սկսեց փախչել՝ քաջ տալով իր յետևից տիրոջը։ Միւս ընկերը տեսնելով այդ սարսափահար թողնելով ամեն ինչ, նստանայի նման անյայտացաւ անտառի խորքը։

— Ափսոս, որսիս մէկը ձեռքիցս թռաւ, ասաց տանուտէր Օհանը իր մտքում, և կամեցաւ ցած իջնել ծառից։ Բայց նոյն վայրկեանին մի միտք ծագեց նրա գլխում. — եթէ այժմ ես ցած իջնեմ, մտածեց նա. կարող եմ ենթարկւել վտանգի. միակ սիւնին, որ ստանայի նման անյայտացաւ, կասկած չըկայ, որ կարող է թագնւած լինել և տեսնել թէ ով է մօտենում այդ քան աւարը տանելու, կամ ինչով է վերջանում այդ բոլորը։

Եւ իրաւ շատ ճիշդ էր տանուտէր Օհանի խելացի կարծիքը։ Սիւնին այն ազգից չէ, որ մահից վախենայ ու այդքան աւարը թշնամուն թողնելով հեռանայ։ Ով գիտէ նրանք քանի տներ էին քանդել և քանի մարդկանց սրի բաժին արել, որ այդքան աւարը ձեռք էին բերել. որտեղ որ է նա շուտով կըմօտենայ, ասաց տանուտէր Օհանը և սկսեց արթուն առիւծի պէս դիտել դէպի կրակը։ Անցաւ կէս ժամ։

Երկինքը բաւական պարզւել էր, բայց դեռ ամեն տեղ տիրում էր խորին լուսթիւն։ Հեռւից, շատ հեռւից լսում էր քարւանի ձայնը, երևում էր, որ նա գիշերւայ թանձր մառախուղի պատճառաւ կանգ առած տեղից սկսել էր շարունակել իր ճանապարհը։

— Լուսաբացը մօտ է, ասաց իր մտքում տա-

նուտէր Օհանը և միւսնոյն ժամանակ իր հայեացքն ուղղելով դէպի կրակը, մի մարդ նկատեց։

Այդ միակ սիւնին էր, որ թագստատեղում երկար մնալուց, յետոյ, ոչինչ չըկարողացաւ իմանալ, և թշնամուն հեռացած համարելով, մօտեցաւ իր ընկերների ձիերն ու աւարը տանելու։ Բայց որտեղից կարող էր նա այդ բանը անել, քանի որ տանուտէր Օհանը մի կարմիր և մահաբեր գնդակ էր պատրաստել նրա համար։ Թէև նա պատրաստեց իր հրացանը, բայց մտածեց ցած գալ ծառից և ուղղակի զինաթափ անել նրան։ — Թող յայտնի լինի այդ անօրէնին, թէ ով էր չորս գընդակի բաժին անողը իր ընկերներին, — ասաց նա և ցած իջնելով ծառից, դէմ առ դէմ կանգնեց սիւննու առաջ և հրամայեց.

— Վայր դիր աւարը, անօրէն. այդ դու մարսել չես կարող։

Սիւնին սարսափահար յետ նայեց և պատասխանեց.

— Այդ դու ես, ասա, գեաւուր, տմարդութիւն չէր քո արածը։

— Գիտեմ, անօրէն, — պատասխանեց տանուտէր Օհանը. — նեղ տեղ ընկած ժամանակը մարդու տրամադրութիւնից կըխօսէք. — բայց, անօրէն, դա տմարդութիւն չէ, որ ամբողջ Խան գիւղը քանդեցիք, խեղճ ու անմեղ գիւղացոյց կոտորեցիք, հարիւրաւոր հարս ու աղջիկ ձեր գազանային կրքերին զոհ դարձրիք. ասա, անօրէն, դա մարդութիւն է, իսկ իմ արածը տմարդութիւն։ Այդ դուք անօրէններ, հէնց որ մէյդանը ձերն է լինում, էլ ոչ տը-

մարդութիւն էք լիշում, ոչ մարդութիւն. էլ ոչ հասակի էք նալում, ոչ սեռի, ոչ աղաչանքի և ոչ արտասուքի. սոխի պէս սրի բերան էք տալիս անմեղ ժողովրդին, և դեռ յանդգնում ես ինձ ամարդ անւանել. աստ, անօրէն, քնչ կանէիք ինձ, եթէ ես ընկած լինէի ձեր հինգ հոգու ձեռքը. չէ որ սոխի պէս գլուխս կըթուցնէիք՝ առանց մի բան ասելու. չէ որ ձեր իւրաքանչիւրի սուրը կըշաղախէր իմ անմեղ արիւնովս: Ես այդ լաւ գիտէի, անօրէններ, և վճռեցի ձեզ մի-մի գնդակ պարգև տալով ուղարկել ձեզ ձեր մեծ մարդարէի մօտ:

— Բաւական է, որքան ձեր Մահմէդի ասելով քրիստոնեաներին կոտորելու փոխարէն հիւրիններ ստացաք «ջաննաթում», այժմ էլ քրիստոնեաները պէտք է պարգևներ ստանան, բայց ոչ ձեզ պէս մոլեռանդ անիրաւութիւնների փոխարէն և այն էլ ոչ թէ երկնքում, այլ աշխարհիս վրայ, իրանց արդար կերպով կատարած քաջագործութիւնների փոխարէն, որոնցով նրանք մի անջնջելի, անմահ անուն կըթողնեն իրանց ապագայ զաւակների համար...

— Աստ, ինչ որ կամենաս, պատասխանեց կատաղած սիւննին. այժմ յաղթանակը դու տարար. բայց անպատիժ չես մնալ, գեաւուր, աւելացրեց սիւննին:

— Խօսք չըկայ, որ եթէ մենակ ինձ ճանկէք, պատասխանեց տանուտէր Օհանը. անհոգ եղիր, քեզ հինգ վայրկեանից աւել ապրելու իրաւունք չունիս, թող քո մեծասիրտ Մէլթի-բէկը լաւ պատրաստութիւն տեսնի մեզ վրայ գալու: Անօրէններ, այդքան անմեղների արեան բողոքը լսեց վերջա-

պէս մեծ մարդասէր թագուհին և նրա յաղթական զօրքը շուտով կըմտնէ Շիրւանի գաւառն ու ձեր խանական իշխանութիւնը իսպառ կըջնջէ:

— Զուր է կարծիքդ, գեաւուր, որ մինչև ռսների գալը Մէլթի-բէկն իր ասածը կատարած վերջացրած չըլինի, ասաց սիւննին:

— Եթէ ձեր Մէլթի-բէկը իմանայ թէ ինչպիսի կարմիր գնդակ եմ պատրաստել նրա համար, կարծեմ աւելի շուտով պիտի անէ իր ասածը: — Այդ միջոցին խօսակցութիւնից օգուտ քաղելով՝ սիւննին կամենում էր ատրճանակը գաղտնի կերպով պարպել տանուտէր Օհանի վրայ, որը յանկարծ նրկատեց և իսկոյն հրացանի մի հարւածով կրակի մէջ գլորեց սիւննուն:

— Անպատիժ չես մնալ, գեաւուր, — ասաց սիւննին, թաւալւելով կրակի մէջ:

— Այլեւր, անօրէն, դու շատ անմեղների ես այդպէս այրել, — ասաց տանուտէր Օհանը:

Այնուհետև նա առանց ժամանակ կորցնելու հաւաքեց բոլոր աւարը, ձիերը և մի փոքրիկ քարւան կազմելով՝ սկսեց շարունակել իր ճանապարհը:

Առաւօտեան Ադամա-լոյսն էր, երբ նա հասաւ իրանց գիւղի ծայրը. արդէն լսելի էին լինում աքաղաղների ձայնը և շների հաջոցը: Այդ վայրկեանին չորս տղամարդիկ մօտեցան նրան. դրանք գիւղի գիշերապահներն էին, որոնք հերթով ամեն գիշեր հսկում էին ճանապարհները:

— Այդ քնչ ձիեր են, հարցրին նրանք, երբ մօտեցաւ տանուտէր Օհանը:

— Զեզ համար եմ գնել, — ասաց նա, — որ հեծ-
նէք ու մեր գիւղին մօտեցող թշնամուն իր արժա-
նի պատիժը տաք: Այսպէս անվերջ ուրախութիւն-
ներով տանուտէր Օհանը նրանց հետ միասին մը-
տաւ գիւղը:

Դ

Յուլիս ամիսն էր: Առաւօտեան արշալոյսը գեռ նոր էր ծագել,
և իր ոսկէփայլ ճառագայթները կամաց-կամաց բարձ-
րացնելով հեռաւոր հորիզոնից՝ սկսել էր սփռել
Երկրանի բարձր ու սրածայր սարերի գագաթներին:
Բայց ահա կէս օրին մօտ՝ բնութիւնը սկսեց փո-
խել իր գոյնը, մի ժամ առաջ փայլող արեգակը
այժմ ծածկւեց սև ու մռայլ ամպերով: Այդ բա-
ւական չէր, բարձրացաւ մի անսովոր փոթորիկ, որ
շատ սակաւ կարող էր պատահել տարւայ այդ ժա-
մանակին: Անախորժ բնութիւնը կարծես նախա-
գուշակում էր մի չըտեսւած փորձանք այդ երեկոյ
այն ժողովրդի գլխին, որ տարիներ շարունակ հեծում
էր թշնամու դաժան լծի տակ: Եւ իրաւ որ այդ ճիշտ
էր: Այդ այն նշանակեալ երեկոն էր, որ Մէլթի-
բէկը պէտք է յարձակէր Կ. գիւղի վրայ: Բայց
նա դեռ իր խմբով սպասում էր Զահրէ ձորում,
որտեղ խօսք էր տւել նրան Ղաջար գիւղի Սալիմ-
բէկը՝ իրանց ուժերը միացնելու: Բայց աւանդ, խա-
բուսիկ յոյս էր այդ Սալիմ-բէկը, որին սպասում էր
նա, գա Կ. գիւղի տանուտէր Օհանն էր, որ ինչպէս
տեսաւ ընթերցողը, ծպտեալ կերպով մտաւ թշնամու

բանակի և իրան թուրք տանուտէր ձեռննելով
իմացաւ ամեն ինչ: Այժմ տանուտէր Օհանը պատ-
րաստ էր իր քաջ գիւղացիներովը գնալ թշնամու
պռաջ, այնտեղ, որտեղ խօսք էր տւել նրանց: Բայց
նա գիւղացոց մեծ մասը թողեց գիւղում ու պատ-
ւիրեց արթուն առիւծի պէս հսկել գիւղին, իսկ
ինքն իր հետ առնելով եօթանասուն հոգի քաջ
հրացանաձիգ երիտասարդներ, կէս գիշերից լե-
տոյ ճանապարհ ընկաւ դէպի Զահրէ ձորը, որտեղ
գտնում էր Մէլթի-բէկն իր բաշիբոզուկներով:
«Պէտք է աղւեսին իր բնումը խեղդել», ասում էր
շատ անգամ տանուտէր Օհանը. թէ չէ, որ նա
իր բնից դուրս եկաւ, իր խորամանկութիւնով նա
ամեն քայլում յաղթող կը հանդիսանայ:

Իրաւ որ այդպիսի խորամանկ բնութեան տէր
մի ազգ էին սիւնները: Հէնց որ հրապարակը ի-
րանց էր մնում, էլ աշխարհին երեսին ինչ անի-
րաւութիւններ ասես, որ չէին անում նրանք: Եւ
այդ բոլորը կատարում էին իրանց օրէնքի թե-
լադրութեամբ, որովհետեւ այդպէս էր քարոզում
Մահմէդի ղուրանը: Այդպէս էին քարոզում և
նրանց մոլեռանդ հոգեւորականները. «ով չէ հաւա-
տում Մահմէդին և նրա գրած սուրբ յուրա-
նին, կոտորեցէք նրանց, մեծ մարգարէն հալալ է
անում նրանց արիւնը ձեզ»:

Բայց տեսէք ընթերցող, մի ազգ, որ այդքան
ճշտութեամբ կատարում էր իր օրէնքի ամեն մի ծէ-
սը, նեղ տեղն ընկած ժամանակ, նրանք, այդ իս-
լամի հաւատարիմ զաւակները ուրանում էին իրանց

օրէնքը և խաւմին: «Եթէ տեսար կեանքդ վտանգի մէջ է, ազատելու ոչ մի ելք չունիս, ուրացիր օրէնքդ, ուրացիր ինձ՝ ես կընկերեմ քեզ»: Կային և այն տողերը նրանց ղուրանի մէջ: Եւ ահա այդ հիման վրայ նրանք ամեն կէտում էլ յաղթող էին հանգիստանում:

Այդ բոլորը լաւ էր իմանում տանուտէր Օհանը, ուստի ճանապարհին պատուիրեց իր քաջերին, որ եթէ Աստուածային զօրութեամբ իրանք կըլաղթեն թշնամուն, առանց մի վայրկեան անգամ կորցնելու՝ պէտք է բոլորին սրի բաժին անել. միայն բացի Մէլթի-բէկից, որին մտադրել էր ձեռն ու ոտը կապոտած յանձնել գեներալ Զուբովին:

Կէս գիշեր էր, երբ տանուտէր Օհանը իր քաջ գիւղացիներով հասաւ թշնամու բանակը: Նա իր մարդկանց բաժանեց չորս մասի և իւրաքանչիւրին պատուէրներ տալով ցոյց տւեց, թէ որ կողմից պէտք է յարձակւել թշնամու վրայ: Եւ ահա երբ նա իր սակաւաթիւ մարդկանցով չորս կողմից շրջապատեց թշնամուն և նշան տւեց յարձակման՝ հրացանները պայթեցին ամեն կողմից: Կատաղի թշնամին, որ այդ ժամանակ քաղցր քնի մէջ էր, իսկոյն զարթնելով՝ իւրաքանչիւրը իր գէնքըն առաւ և սկսեց կանոնաւոր կռիւը երկու կողմից: Բայց երբ տեսան չորս կողմիցն էլ կարկտի պէս տեղում են գնդակները, հէնց կարծեցին թէ ռուսաց զօրքն է: Շատերը պատրաստուում էին փախչել, որովհետեւ գիտէին որքան էլ քաջութիւն ցոյց տան, այնու ամենայնիւ անպարդիւն պիտի անցնեն իրանց բոլոր ջանքերը: Բայց բանն այն էր,

որ փախչելու հնար չունէին. որ կողմից որ կամենում էին փախչել, գնդակահարուում էին:

Այդ վայրկեանին Մէլթի-բէկը կատաղած գոռաց: — Իսլամի զաւակներ, ցոյց տւէք ձեր քաջութիւնը, ես դեռ կենդանի եմ:

Հէնց այդ ձայնին էր սպասում տանուտէր Օհանը, որ իմանար թէ որ կողմումն է կանգնած այդ անօրէն գազանը: Նա իր ձին մտրակելով՝ մօտեցաւ մի քանի քաջերով և շրջապատելով Մէլթի-բէկին, հրամայեց.

— Անօրէն, վայր դիր քո ձեռքով գէնքերը՝ թէ չէ գլուխդ սոխի պէս կըթռցնեմ:

Մէլթի-բէկը, որի համար հազար քրիստոնեայի գլուխը մի սոխի գին չունէր, իր կեանքում այդպիսի վերաւորական խօսք անգամ չէր լսել և կամենալով իր վերջին ոյժը փորձել, նա ձեռքը տարաւ իր դաշոյնին, բայց դեռ կէսը պատեանի մէջ էր, երբ տանուտէր Օհանի սուրը փայլեց և այնպէս հասցրեց նրա գըլխին, որ իսկոյն գլուխը սոխի պէս երկու կէս եղաւ: Մէլթի-բէկը իսկոյն ձիուց վայր ընկաւ նրա ոտների տակ: Այնուհետեւ նա հրամայեց կենդանի մնացած սիւննիներին, որոնց արդէն շրջապատել էին գիւղացիք, կոտորել առանց խղճալու:

— Ժամանակ է, տղերք, թշնամու հետ վարւել այն ձևով, ինչ ձևով վարուում են նրանք մեզ հետ, — ասաց տանուտէր Օհանը և սուրը մերկացնելով, մտաւ կռւի մէջ: Բայց այդ վարկեանին յանկարծ կատաղած սիւննիներից մէկը գաղտնի կերպով պարպեց իր ատրճանակը հսկայ տանուտէր Օհա-

նի վրայ: Եւ նա վիրաւորւած՝ ձիուց վայր ընկաւ: Այդ միջոցին թէև վրայ հասան նրա քաջ գիւղացիները, բայց արդէն ուշէր: Գնդակը վատ տեղիցն էր կպել և նա գտնուում էր իր վերջին շնչում: Հէնց այդ միջոցին լսեց հեռւից փողերի ձայնը. դա ռուսաց զօրքն էր, որ լուսադէմին արդէն մօտենում էր Շիր-ւանի գաւառին: Նա մի անգամ ևս աչքերը բացեց ու հարցրեց. — Արդեօք ռուսաց զօրքը մօտենում է»: Նրան միամտացրին, որ արդէն երևում է:

«Ես ծնեցի և մեռայ իմ հայրենիքի հողն ու ջրի և գիւղի անունը բարձր պահելու համար»: Այս եղաւ նրա վերջին խօսքը և ականդեց հողին:

Եւ ահա նոյն օրը, ուղիղ կէսօրին ռուսաց զօրքը առանց մի ընդհարում ունենալու, մտաւ քաղաք: Մուստաֆայ խանը իր ձեռքով յանձնեց քաղաքի բանալին գեներալ Զուբովին, և խոստացաւ, որ այնուհետև հաւատարիմ կըմնայ ռուսաց տէրութեանը: Այսպէս ահա 1796 թւին, յուլիսի վերջին, Շիրւանի գաւառը ռուսաց տէրութեան ձեռքն անցաւ:

Իսկ տանուտէր Օհանի մարմինը Կ. գիւղացիք տարան ամփոփեցին իրանց գիւղի գերեզմանատանը և նրա գերեզմանաքարի վրայ գրեցին.

«Այս է տապանը տանուտէր Օհանի, որ ծընեց 1751 թւին, և վախճանեց 1796-ին, Սիւննի Մէլթի-բէկ աւագակապետի հետ ունեցած կռուում»:

Եւ մինչև այսօր էլ այդ քաջ տանուտէրի մարմինը ամփոփւած է Կ. գիւղի գերեզմանատանը:

Իմ աշխատութիւններից լոյս են տեսել

1. Իմ քնարը (սպառւած) 15 կոպ.
2. Ներքնապետ Ասլանը (սպառւած) . 10
3. Տանուտէր Օհանը 15 »

Գիմել Թիֆլիզ՝ Կենդրոնական գրաւաճառանոցին,
իսկ Բագու՝ Հեղինակին.

Баку, Акоту Бабаханяну
Спасская ул., д. № 115.

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Պատրաստ է տպագրութեան համար

ԱՐՏԱՔՍԻԱԾ ՈՐԴԻՆ

6977

2013

